

ՏՐԻԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Պաշտարան	համար
Տարեկան	12 ֆր.
Վեցամսյան	6 "
Մի ամիս	15 "
Վեցամսյան	8 "
Անկախ	համար
Տարեկան	3 ֆր.
Վեցամսյան	1.50 "

Մանուկան սոցիալական կրթության համար 40 ս. իսկ վերջին կրթական համար 20 ամիսով հ. կրթական անկախ անկախ համար 20 0/0 զեղչ կըլ ըստ:

Հանձնար համար մ. 10 ամիսով

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՐԵՔԵՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

Նամակ եւ ցրակ դիմելու համար գրեցե՛ք:

Редакция на вѣстникъ  
„Шаржумъ“  
Варна

Redaction du journal  
„Charjoum“  
Varna (Bulgarie)

Արտատպագրության համար  
մեկ ( 20 ՄԱՆԹԻՄ )  
Պաշտարան համար  
մեկ ( 15 ՄԱՆԹԻՄ )

Գրությունք եւ չեւ սրտիք

ՇՈՐԵՔԵՆԱԲԻ ԿՈՄԻՏԵ ԿՐԻՈՂԸ ԲԱՃԱՆԿՈՒՄ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԻՎ ԿԱՆԿԵՐ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԻՈՒԹԻՒՆ

Բ.

Անցեալ անգամ մենք խօսելով ազգերու բաժան-բաժան եղած մասերու միացման պատմական անհրաժեշտութեանը մասին, ցոյց տուինք թէ ազգային այդօրինակ միութիւն մը այսօր հայկական կեանքի իրական պահանջներէն մէկը դարձած է:

Այստեղ ի հարկէ առաջին անգամ ինկատի կուգան Հայութեան երկու մայր կոնցրը—ժողովրդական հայաստանը եւ Ռուս հայաստանը: Հայ ժողովուրդի այս երկու մեծ մասերը գնել քաղաքական եւ կուլտուրական միեւնոյն պայմաններու տակ՝ ներկայ դը ժուրին պայմաններուն մէջ մեզ համար կարող է միայն հեռաւոր եւ ցանկալի նպատակ մը ըլլալ, բայց ժամանակի ընթացքին այդ իսկ պատրաստելու ու այսօրուան մեր սկսած ընդհանուր ազգային ազատագրական պայքարը յաջողութեամբ տանելու համար անհրաժեշտ է, որ Ռուսահայերը եւ ծանկահայերը հիմա առաւել եւս քան երբէք զգան, թէ մենք եղբայրներ ենք, իրարու հետ կապուած՝ բնական ու պատմական յարաբերական կապերով, պէտք է ձեռք տանք իրարու մեզ համար մարդավայել ու ազատ կեանք մը ոտնոյնելու համար, ոտնակոխ ընելով անցնինք այն սահմանները, որ բռնաւորները մեր թշնամիները գծեր են մեզ համար:

Սակայն ի՞նչպէս ձեռք տալ, ի՞նչպէս միանալ, Հայկական աշխարհի այդ երկու մասերը չեն օժտուած քաղաքացիութեան այսօրուան բարիքներով, որ Ռուսահայերը եւ տաճկահայերը արագ յարաբերութեան միջոցաւ իրարու հետ շփման գային ու մտնէին մտաւոր հաղորդակցութեան մէջ, չկան երկաթուղիներ, չկան քաղաքացիականներ, բռնաւորները ամէն ինչ առաջուրնէ հողացեր են, որ այդ կապը միշտ

թոյլ, միշտ տկար մնայ:

Աստիճակով հարկէ դժուարութիւններ են, մեծ դժուարութիւններ, որոնց հետ պէտք է հաշուել եւ անոնց դէմ մեր ոյժերու ներած շարժով մաքառել, բայց կայ հաղորդակցութեան մտնելու ուրիշ միջոց մը եւս, որ երբէք արգելք չի ճանչնար—այդ է յեղափոխական պրօպագանդը: Ենդ. գործընկերութեան հրատարակութիւններու միջոցաւ մենք կարող ենք միացնել հայկ. աշխարհը մէկ ծայրէն միւսը՝ տալով անոր նպատակաւոր մարտնչութիւն: Եւրոպայի ազգային միութիւնը առաջին անգամ պիտի կուսանայ յեղափոխական բանակներու միջեւ: Եւ այստեղ Հ. Ս. Իսկանդրութիւնը եւ Կովկասի Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէն իրենց ազգային եւ յառաջգրկական կուսակցութիւններու ներկայացուցիչները մեծ դեր եւ մեծ պարտականութիւններ՝ հանդէս ազգային ընդ. ազատագրութեան գործին:

Կան մարդիկ — բարեբաղդաբար աննշան եւ անկարեւոր մարդիկ—որոնք միասակար կը գտնեն այսօր Ռուսահայկական ինքնապաշտպանութեան հարց բարձրացնելու, աւելի միասակար կը գտնեն, որ յեղ. ոյժերը երկու տեղ զբաղին, անոնք կըսեն՝ պէտք է Ռուսահայաստանը առայժմ իր բազմիւն ձգել:

Եւս է գոյատեւական գծու հաշիւները ձգելով պարզի խորհող երկչոտներուն, ճշմարիտ յեղափոխականը, հաւատարմ իր կոչման, կը վառէ յեղափոխութեան սրբազան կրակը ամենայն տեղ, ուր հայը ճշման տակ կապրի ու բռնութեան մը ծանր լուծը կը կրէ իր ուսին վրայ՝ հաստատ հաստք ունենալով, թէ այդ հարցը ուշ կամ կանոխ պիտի լափէ լափիլիզէ՛ք բռնաւորներու հազարաւոր անմեղներու արիւնով ներկուած արեւները:

Թող բոցավառութի ուրեմն յեղ. այդ հրդեհը, որու բարձրացուցած ծուխին ու կրակին մէջէն

մենք կը գոչենք. —

Կեցցէ՛ Հայկ. Յեղափոխութիւնը, կեցցէ՛ Հ. Ս. Իսկանդրութիւնը, կեցցէ՛ Կովկասի Ինքնապաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէն:

Անկցի՛ն բռնաւորները...  
Մարգարէտնի

### ՏՐԻԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ ԲԵԹԵՐԱՊՈՒԹՅԱՆ ՄԷՋ

Բեռնապարտ կէն (Ճայֆ) ին կը գըրեն:

Հայրենասիրական ցոյցերը, որոնք հետեւեցան պատերազմի առաջին շաբաթներուն, շատ ցաւալի վերջարան մը աւելցան: Մոսկովայի եւ Բեռնապարտ կէն կանանց դասընթացի ուսանողները բողոքեցին համարական այս ուղիներուն դէմ, գործ պրօֆեսորները թէ իրենց եւ թէ ուսանողները անուղի մատուցեցին ինչպէս. այս բողոքի հետեւանքով Մոսկովայի կանանց համալսարանը գոցուեցաւ եւ Բեռնապարտ կէն համալսարանի մէջ դասախօսութիւնները առայժմ ընդհատուեցան: Պ. Փոն Պըլէնովէ այս համալսարանի փակումն ալ կը պահանջէ: Այն յոյսը, թէ պատերազմը Փոն Պըլէնովէի հալածանքի ետեւից պիտի կտորէր չիբրկանացաւ, Հեղափոխական քաղաքի ոստիկանութիւնը իր աջակցութեամբ բողոքողները կը կատարէին մասնաւորապէս գրական եւ ուսանողական շրջաններու մէջ — անսպին թուով:

Նոյն վրէժախն. համարաւոր ծերունի Սուվորինի թերթը, որու կառավարութեան բերանը, յարմար ժամանակին իր թերթի մէջ գրող Մենչիքովի միջոցաւ կը բացատրէ որու հասարակութեանը ներկայ պատերազմին ճշմարիտ պատճառը: Այս բացատրութիւնը բաւական պարզ է, — կոտի պատճառը հիշանիւն են: Ամերիկան Հիլի ծանուցագրի մերժման, իսկ Անգլիան Բեռնապարտ կէն արտաքսուած Բրոկլամ թղթակցին համար վրէժ առնել կուզեն: Այդ թղթակցիցը «Թայմս»-ի մէջ Քիչնելի գրամայի գաղտնիքներն էր մերկացուցեր: Եւ այդպէսով Ամերիկան ու Անգլիան ծառնոյն կոտի գրգռեցին, իսկ հրէաները իրենց միջնորդները անոր արտաքսութեան տակ դրին: Ռուսական սաղանդաւոր հրապարակագիր Անֆիլեթապովը, որ մօտերս

սկսեցաւ անգամ մենք վերադարձաւ, Սուվորինի որդիներն մէկուն հրատարակած «Ռուս» անուն ազատամիտ թերթին մէջ փայլուն յորտածով մը պատասխանեց այս թերթին: «Ինչ զգացումներով, կըսուի հոն, — հրէայ զինուորները, բժիկներն ու գթութեան քոյրերը, որ ամէն օր պատերազմի դաշտը կը զրկուին, այս սողերը պիտի կարգան, ինչ զգացումներով ուսը պիտի կարգայ, որ վարժուած է ամէն մի աշակերտի մէջ թշնամի մը տեսնելը:

Պարզ է որ Քիչնելի մէկ դէպք մը անկարող է որու կառավարութեան լաւ արամադրութեան վրայ ազդել: Պատերազմի ալմուկին մէջ այդ ազդեցիկ թերթը նոյնօրինակ երկրորդ արկած մը կը գտնէ պատրաստել:

Ռուս շրջաններու արամադրութիւնը օր օրի աւելի կը պարզուի: Պատերազմի համար ոչ մի համակրանք ցոյց չեն տար, երկրի զարգացած մասը ցաւով կը տեսնէ Ռուսաստանի համար գալիք անկուր: Կը յուսացուի, որ պատերազմը տեղի տայ ընկերական եւ քաղաքական կեանքին վերանորոգման: Երկրի թերթերու մէջ ի հարկէ շատ զգոյշ, այս յոյսը կը շողայ: Պօրը-Պրիմորը Ռուսաստանի համար երկրորդ Սկստաւարով մը պիտի ըլլայ, նոր պարտութիւն մը առաջ պիտի բերէ ու անհրաժեշտ դարձնէ բարենորոգումներու եւ վերաճողութիւններու նոր շրջան մը:

Ռուսը զիս միշտ խիստ ինքնակալութեան տակ կապրի: Յարի եւ ժողովուրդի միջեւ մտերմական ու եւ է կապ մը եւ վստահութիւն չկայ: Պատերազմի առաջին օրը, ձմեռան յին պալատի մէջ կայացած ժողովրդութեան միջոցին, կայսրը ոչ մէկ խօսք չէ ուղղի բազմութեանը, Յարիտասարգ սպաները շուտեր են. եւ զինուորական շրջաններու մէջ արդէն պետական խառնակութեան մը կարելիութեան մասին կը խօսուի: Ռուսաստանի մէջ մէկ շատ ժողովրդական զօրապետ մը, որ միեւնոյն ժամանակ շատ ազատամիտ եւ ջերմ հայրենասէր մըն է, շրջանի մը մէջ ըսեր է թէ — սերը Մանչուրիայի մը համար կը կոտորեն, մինչեւ Բեռնապարտ կէն եւ Յարիտասարգ մէջի տարածութիւնը (Յարի նստած տեղը, որ կէս ժամ հեռու է) զիս չենք կիցած սիրել:

Սակայն պատերազմի համար արուած նոյնիպատուութիւնները լայն ոսկեայ ալիքներու նման կը հոսին: Սարսափելի եւ մահաճոտ սովի տարին ո՞վ կը հաւատար. թէ Ռուսաստանի մէջ այդքան հարուստ մարդիկ

կան : Թնդանօթները կորուսան եւ գրպանները կը բացուին : Ով որ կամաւորապէս չի նուիրեր , անոր քրնջուշուկեամբ կը յիշեցնեն : Այս մասին բնաւ չը խօսինք , որ բոլոր պետական եւ համայնական պաշտօնեաներու ամսականներէն կը զեղչուին յօղուտ պատերազմին , կը սպասուի որ վաճառականներն ու արհեստաւորներն ալ իրենց ծախած իրերէն որոշ տոկոս մը յատկացունեն : Ամէն ոք կը վճարէ այն ինչ որ կը հրամայուի—կրնայ թէ չի կրնար այդ միւսնոյնն է :

Նոյն թերթին մէջ կը կարգանք գէպքի մը մասին հետեւեալը .  
Լեհայի շուկականար Պատէրէվսքի բրաժշտական ընդունակութեան վրայ ծարը շատ կը հիանայ , ճառով մը կը պատուէ արուեստագէտը եւ կը յայտնէ , որ ինք շատ ուրախ է ուսուսի մը քով այդքան ձիւքեր տեսնելով : Պատէրէվսքի կը պատասխանէ , «Ներքեզ , Վեհափառ Տէր , ես լեհացի մըն եմ :» Նոյն օրը ուսիկանու թեան կողմէ ազդարարուեցան Պատէրէվսքի , որ Ձէ ժամուայ մէջ ձգէ Բեանրսպուրկը , միւսնոյն ժամանակ իրեն հասկցուած է . որ ան մշական կերպով մայրաքաղաքէն արտաքսուած է : Արուեստագէտը պիտի տար ուրիշ շատ նուազահանդէսներ : Ատոր համար իրերթերը գրեցին , թէ Պատէրէվսքի աննախատեսելի պատճառներով ստիպուած է եղել երաժշտական ներկայացումները զաղրեցնել :

### ՀԵՐՊԱՐՏ

(Մանկավարժական)  
(Շար. Ասխրոյ քիւնի)

Կոյր ու կամակոր բնագրներու , վարենի ցանկութեանց սերմերը միշտ կենդանի կը մնան երախային մէջ և տարիներու ընթացքին մէջ նոյնիսկ աւելի կուժեղանան : Կամքը կսկսի ձնիլ այս պայմաններու մէջ , և որպէսզի ան չազդուի վնասակար այդ տարրերէն վերոյիշեալ ձնուած պէտք է ըլլայ տեսողական :

Սորհելու կարող չափահաս մարդը ինքզինքը կրնայ կառավարել : Այո՛ , կան նաեւ մարդիկ , որ այդ կատարելութեան երբէք չեն հասնիր , բայց հասարակութիւնը զանոնք իրենց յիմարներ և ուղեղային հիւանդներ կը պահէ սշտական հսկողութեան տակ , որովհետեւ հակառակ պարագային անոնք կը խանգարեն ընկերական կարգերը : Այս բոլորին առջեւ սակայն մեծաւ մասամբ առնուած կըլլայ , երբ հոգ տարուի երախաներու կառավարութեան վրայ , որու նպատակները ինչպէս սեսանք զանազան են : Անով մենք այն արարքներուն առջեւ կատարենք , որոնք վնասակար են և անհասկոյ թէ երախային և թէ զինքը շրջապատողներուն համար , կը խուսափինք այն անհամաձայնութենէն , որ ապագային պիտի ծագի ընկերական կարգերու և շարք առած երախայի միջեւ :

Այսուհանդերձ երախաներու կառավարութիւնը նպատակ չունի մշտնապէս պահելու հոգեկան աշխարհին մէջ , այլ կուզեն միայն զանոնք կարգապահութեան վարժեցնել :

Հիմա խօսինք երախաները կառավարելու միջոցներուն վրայ : Ամէն կառավարութեան առաջին միջոցն է նպատակաւոր , բայց այստեղ պէտք է հաշուել երկու արգելքներու հետ : Կան բնաւորութիւններ , որոնք ամէն սպառնալիք կարհամարհեն և յանապուստ կերպով կուզին իրենց կամքը առաջ քաշել , կան ալ բնաւորութիւններ , որոնք տկար ու մոռացկոտ են սպառնալիքի ազդեցութեան ենթարկելու , զայն կրկու համար :

Առաջին արգելքը այնքան ալ զգուշացնել , երբ ժամանակին անոր դէմ առնուին դատարարական միջոցներ : Բայց երկրորդին՝ երախաներու տկարութեան ու մոռացկոտութեան առջեւ ամէն սպառնալիք կը կորսնցնէ իր նշանակութիւնը , ատոր համար ալ մարդիկ դիւր են նկրողութիւնը և ընդունելու զայն կառավարութեան իրեն լաւագոյն միջոց :

Հսկողութեան մասին դիւրին չէ դրական սխալներ յայտնել , դպրոցներու մէջ յառաջ եկած փորձնական օրինակները շատ ալ քաջալերելի չեն , միայն նկատենք այստեղ , թէ այդ գործը հսկելին ու հսկողներուն համար միանգամայն ձանձրանալի է , ուստի չի կարող ալ բարեխղճութեամբ կատարուիլ , երախաները իրենց զարգացման ընթացքին մէջ պէտք է անկախ ըլլան , անոնց ուղեղը պէտք է ինքնուրոյն կերպով աշխատի գտնելու համար այն հազարաւոր բաները , որոնք մանկավարժական սիստէմի մը մէջ չեն մտնել , այլ կը բացուին մասնաւորներու հոտաւորութեամբ : Յետոյ հսկողութեան տակ կը տուժէ նկատագիրը , որ կը կազմուի ինքնակամ և ինքնուրոյն զարգացմամբ : Այս բոլորը ի հարկ է կըսուին տեսողական հսկողութեան մը համար , բայց չեն յարմարիր , երբ հսկողութիւնը կը կատարուի կարծ ու պարբերական ժամանակներու համար :

Երբ հսկողութիւնը կուսնու դարձուի , այն ատեն պէտք չէ պահանջել անոնցմէ , որոնք այս օրինակ մշտական ձնածան մը տակ կարգին ճարպիկութիւն , ինքնուրոյն դործ , լանդշաֆտիւն և ինքնազստան ձեռնարկները իրեն :

Ասով կրտսեղութիւն մարդիկ , որոնք կը սիրեն միշտ միջոցնակ մեքենայական աշխատութիւններ և կուսնուան միջոցնակ դանդաղ բնաւորութիւն : Բայց այս չի նշանակել թէ երախաները ձգելու է բոլորովն առանց հսկողութեան և—ինչ որ աւելի վտանգաւոր է— առանց դատարարական թեան : Դատարարականութիւնը մեծ և բարձր գործ մըն է որ պէտք է յամառ աշխատանքով և զոհարարութիւններով , սկիզբէն մինչեւ վերջը աւանդու հասցնել զայն սերունդներու համար ցանկալի վերջարանի մը :

(Շարունակելի) Մարգարէտնի

### ՁԻՆԱԿԱՆ ՈՒԹԱՅ-ՁԱՆԿ ԴԵՍՊԱՆԻՆ ՄՕՏ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

—Կարծեմ , ձերդ վստախութիւնը լրջաբար կը ըլլայ , թէ Ձին-ճարտական պատերազմի լուրը Ձինացիներու մեծ մասին այն ժամանակ միայն հասաւ , երբ պատերազմը արդէն շատոնց լրջացած էր : Այդպէս այժմ ձեր հսկա-

յական պետութեան մէջ միայն քիչերը տեղեկութիւն պիտի ունենան ուսու-ճարտական պատերազմի բռնկման մասին...

—Ո՛չ , ո՛չ , բացասեց չինական քաղաքագէտը , ճարտարապետ հետ մեր ունեցած կուսէն ի վեր իրերու վիճակը շատ փոխուած է : Եւ հրատարակութիւնը շատ տարածուած է : Այն ատեն ընդհանրապէս երկու լըրապրիներ կային : Այդ օրէն մինչեւ այսօր՝ ասոք տարուան մէջ սակայն մեծ յեղաշրջում է առաջ եկիր Ձինաստանի լրատարական գործին մէջ : Այսօր բոլոր մեծ քաղաքներուն մէջ լրագրիներ կը հրատարակուին : Աստոր վրայ աւելցուցէք նաեւ զանազան հարողակցութեան միջոցներու տարածումը : Ներկայ պատերազմը Ձինաստանի մէջ շատոնց ի վեր յայտնի է եւ հասկնալի շահագրգռութիւնն է առաջ բերել : Ինչպէս գիտէք ուսու-նեցողութիւնը Մանչուրիայի գրաւուած մեզ չինացիներու համար շատ ցաւալի է... Այնպէս պիտի վերջի-չիմ : Մեզ մօտ օտար կրօնաւորներ էին սպաննել , Բայց ձեզ մօտ եւրոպայի մէջ ալ միթէ չեն սպաննել : Այսինքն չինացիներու կողմէն , չինացիներու կողմէն , անմեղ կայսրուհի մը... Գերմանեան ֆրազուուի մէջ հաստատուեցաւ , Ռուսաստանը Պորթ Արտուրը վերցուց եւ Անգլիան Վէյ-հայլէյը : Բօքսերներու ապստամբութիւնը բրդաւ եւ օտարականները վտանգի մատուցեցան : Վեց պետութիւններ մտան Ձինաստան , երբ իսպաղոնթիւնը տիրեց բոլորը եւ քաղաքացան , միայն Ռուսաստանը մնաց : Ձինկ իշխանը Փեքինի բոստական զեպաններ կրկնակի անգամներ յիշեցուց , որ ուսուցը թողնել Մանչուրիան , Բոլոր գիտնականները պարզիւն մնացին , Ռուսերը երկրի մէջ մնացին , այն երկրին , որ Ձինաստանի վրայ իշխող Մանչու հարստութեան սերունդի գերեզմանները կը պահէ : Դուք լաւ գիտէք , թէ ինչպէս չինացիներու համար բոլոր գերեզմանները սուրբ են...

—Բայց ի՞նչու չի մարտնչուի : — Այս հարցումին վրայ Ու-Յայ-Ձանկը ըսաւ .

—Մեր կայսրուհին շատ զարգացած եւ զիմացուեն կին մըն է : Բայց դժբախտաբար Ձինաստանը չունի այն ուժը յաջող կերպով ազատանալու իր սրբազան իրաւունքները : Ձինաստանը պէտք է որ բարեկարգուի , ամենէն առաջ իր գինորակութիւնը , երանի թէ Փեքինիկի մէջ բոլորը ախպէս բարենորոգումներու յոյսով ըլլային , ինչպէս Ձինաստանի փոխարքաններէն ոմանք , օրինակ՝ Ձանչիթունկը կամ Եուանչիթայը : Բարեբաղդաբար փոխարքաններն չատերը այժմ եկեր են այն գաղափարին , թէ բարենորոգումներ անհրաժեշտ են : Եւ ինչպէս ըսի , Ձինաստանի գործերը շատ բան ունին եւրոպայէն սովորու : Այնպէս պիտի ընենք , ինչպէս որ ճարտարապետ ըրաւ :

—Ձերդ վստախութիւնը կը կարծէ՞ , թէ ճարտարապետը գործի մը համար կը պատերազմի :

Ու-Յայ-Ձանկը պատասխանեց՝ ձեռնարկական պետական անձնութեան բերաններէն լսելու , թէ ճարտարապետը կերպ չի կրնար ընել ճարտարական տեսնելով որ Ռուսիան Մանչուրիան գրաւած է , վախցաւ թէ ան զէպի Բօքէա պիտի յառաջանայ , եթէ Ռուսիան առգամ մը Բօքէա մտնէ , արդէն ճարտարապետ մը կը գրա-

նուի : ճարտարապետը կրնար իր գոյութեան պայմաններուն սպասնացող վտանգը չը տեսնել...

Դեպքանը զիտել տուաւ նաեւ , թէ Ռուսաստանը Մանչուրիայի մէջ դիւրութեամբ կըրցաւ ոտքը ամբարշտել , որովհետեւ հոն բնակչութիւնը մտաւոր աւելի ստոր աստիճանի վրայ է կանգնած քան թէ Ձինաստանի միւս մասերուն մէջ , եւ թէ հոն զօրքերը աւելի վատ էին սպառազինուած քան թէ օրինակի համար՝ Փէչիլիի կամ Շանթունկի եւ կամ Գանթունի մէջ : Դեպքանը չի համարձակուի պատերազմի ելքի մասին նախապես շահութիւններ ընել , սակայն կը գովէ ճարտարներու ճարտարութիւնը , այլապէս անոնք եւ դիմացկունութիւնը , որով անոնք եւս աւելի եւրոպական յառաջադիմութեան բարեբերը իւրացուցած են : Ձինական այս քաղաքագէտը կը թուի որ հասկալի չէ այն մտքին , թէ ճարտարները պիտի ըլլան միջնորդ Ձինաստանի եւ եւրոպական քաղաքակրթութեան միջեւ եւ Ձինաստանի մէջ խաղաղ ճանապարհներով պիտի մտնեն զինուորական ու վարչական վերակազմութիւն մը :

Վերին աստիճանի վերապահութեամբ կը խօսի ան Ռուսաստանի մասին : Ան կը կարծէ , որ այդ իր պարտքն է , որպէս չեզոք պետութեան մը ներկայացուցիչը :

Ու-Յայ-Ձանկ ուշի ուշով կը կարգայ Ֆրանսական լրագրիները եւ կը զարմանայ այն ոգեւորութեան վրայ որ Ֆրանսական մամուլը կը ցուցնէ զէպի Ռուսիոյ Մայրաքոյն Արեւելքի մէջ ունեցած խնդիրները :

Ան լաւ կը յիշէ իր Ֆրանսայի մէջ անցուցած ժամանակները : Ամենէն առաջ չինական պատգամաւորութեան մը իրենց գլուխ Փարիզ կեղծ է եւ յետոյ հոն երկար ժամանակ մնաց ու ճանչցաւ կարեն , Յոր եւ Լուրէ նախագահները :

Լի-Չունկ-Ձանկի քառուղարն ըլլալով անկէ առանց ազդեցութեան չը մնաց : Ասիկայ իր բարենորոգման եռանդին մէջ աւելի առաջ կերթայ թան թէ մեծ Լիւն : Երբեմն գիտողութիւններ կընէ , որ հոգալուոր չինացու որոշ խօսքերը կը իշխեն , օրինակ—«Պետութիւնները կը նստին Ձինաստանի վրայ ինչպէս կարկանդակի մը , ուրկէ իրենց արտաժակի ու ցանկութեան համաձայն քանի մը պատառ կտրել կը մտածեն» —Ուրիշ անգամ մը , կընէր Լիւն , «Ինչպէս թէ Պետութիւնները իր սիրապետութիւնը իրաւունքը ժողովուրդին կամենէ , եւ չինացիները կուզեն չինացիներ մնալ» :

Երբ Ու-Յայ-Ձանկը Փէչիլիի մէջ ազդեցութիւն ձեռք բերէ , յամենայն զգաւ բարենորոգումներու գործին ոգտակար պիտի ըլլայ : Մտածանակներու Փեքինի կանչուած էր , բայց այդ կարգապահութիւնը չի բարձրացուցաւ :

Ասով միւսին ան վիշտայի մէջ լաւ տեղաւորուած է , բնակարանը չինական գեղարուեստական գործերով անգարանի մը կը նմանի :

Մեծ սիրով հաւաքեր է յախճապակեայ եւ ապակեայ անօթներ եւ ինքնագովութեամբ մատուցող զրեւանոնց հին գրաւիները , որ ցոյց կուտան թէ այս հնութիւնները Միկիւն հարստութեան օրերէն են , ուրեմն դարձուած էին են : Այս հազարաւոր տարիները բոլորն ալ սեղութեան

կրիքը կը կրեն, հակառակ ճարտարական առարկաներու թանկագին գորգարանքին:

Ժամանակ մը կար, երբ Չինաստանը այսպէս ընկճուած չէր աշխարհի մէջ. եւ թերեւս Ուլթայ-Չանկը սիրով կերպով էր հայրենիքի այս հին փառքի մասին, որը թէեւ այսօր թոյլ է աշխարհի մէջ, սակայն դեռ միշտ բնակիչներու թիւով ամենէն բազմամարդն է եւ աշխարհի վրայ ունի պետութիւն չի հասնիր իրեն: Ն. Ֆ. Պրիստի

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՂՈՎ

Հայ Յեզ. Գաշնակցու թեան Սօֆիայի Ենթագոյն իտէն «Լուսարան» պիտի ունենայ յառաջիկայ կ'ըրակի Մարտ 14ին կէսօրէն վերջ ճիշտ ժամը 2ին քաջէ «Օտէստի» սրահին մէջ:

Ատենախօսելու համար հրաւիրուած են ընկերներ,

Պ. Պ. Թինաս Աղանան և Ա. Վառճա:

Երկու փոքրիկ օրիորդներ և պարոն մը պիտի արտասանեն. «Կորիճ ախպէր», «Տայգուկ մի վախճար» և «Գէպի երկիր»:

Նորակազմ «Քնար» երկսես երգեսկի խումբը պատրաստած է այս ցածր մի քանի երգեր, Ուստի ջերմապէս կը հրաւիրենք Սօֆիայի երկսես հայ հասարակութիւնը ներկայ գտնուել սոյն ժողովին, ճիշտ նշանակուած ժամուն:

Հայ Յեզ. Գաշնակցու թեան Սօֆիայի Ենթագոյն իտէն 1904 Մարտ 10 Սօֆիա

ՊԱՐՈՒՄԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՅ

ՍԻՂԱՅ

Պարսիկները վարք ու բարքի, նիստ ու կացի մէջ աչքի ընկնող մի խոշոր երեւոյթ է ներկայացնում Պիղայի արտադրութիւնը: Սիղան ամուսնութեան մի տեսակն է, որի հիմքը կազմում է բազմակնութիւնը...

Պարսիկները առհասարակ շատ վատաշուտ ժողովուրդ են: Նրանք արդէն ամուսնական ցանկութիւնը վեր են ածել անստեղծ ցանկութեան: Բնութիւնը նրանց հոգու ծալքերում բազմակնութեան և արուագրութեան ախտական պահանջի հետ միասին գրել է նաեւ շնական հեշտասիրութեան զգացումը: Անշափ մարմնասիրութիւնը և գէշ ցանկասիրութիւնը անյողզող կամ քիչ և կրքերը զսպելու ունակութիւնից աւելի գերակշիռ տարր լինելով նրանց խառնուածքում, արամադրել են նրանց նոյնիսկ ճամբորդութեան ժամանակ և ընտանիքի գրկից մի ամսաչափ բացակայութեան միջոցին կենակցութեան սաստիկ պահանջ զգալու: Առաջ է եկել այսպիսով մի երեւոյթ, կեանքի մը աշխարհակցութեան, որին թէեւ պարսիկները Սիղայ են ասում, սակայն մենք ամենայն իրաւունքով «շնութիւն» կանուանենք...

Ոմեն մի պարսիկ ունի իր անձնական-անհատական գործը: Իւր այդ գործի համար նա հարկ եղած գէպքում կարող է որոշ ժամանակով բացակայել իւր ընտանիքի գրկից, — այսինքն առ ժամանակ գործը կարող է նրան ուղարկել մի ուրիշ քաղաք կամ միայլ գիւղ: Ահա՛ այդ բացակայութեան միջոցին, մինչեւ իւր վերադարձը, նա անկարող լինելով հնազանդելու իր ընտանիքին և զգաստութեան պահանջներին՝ բերում է իւր մօտ այդ քաղաքի կամ գիւղի աղջիկներէ մէկին նրա ծնողների փոխադարձ համաձայնութեամբ և կենակցում է նրա հետ: Երբ իւր գործը վերջացնում կամ կարգի է բերում, ուղարկում է նրան դարձեալ իւր ծնողների մօտ, իսկ ինքը վերադառնում է իւր ինքնական կնոջ մօտ: Կենակցութեան այս ժամանակաւոր ու հեշտակցութեան մօտէնտը կոչում է Պիղայ:

Սահում են երկար ու ձիգ տարիներ: Կեանքը նոյն պարսկին կրկին ուղարկում է միեւնոյն քաղաք կամ գիւղ: Հպատակութեան ողջուն մատուցանելով իւր զգացումները ձայնի և առելով մեծակեաց կեանքը՝ նա դարձեալ դիմում է Սիղայի օգնութեան և ընտրում է իւր համար մի որ և է աղջիկ ու կենակցում նրա հետ: Ո՞վ է այդ աղջիկը: Մանրա-

կրկիս հարց ու փորձը ծանօթացնում է նրան իւր նորեկ ամուսնուհետ: այստեղ հայրը ճանաչում է իւր հարազատ աղջկան՝ հեշտաբեր Սիղայի պղծու ապուղին... Ճանաչում է, բայց... տափանքից ու անգիտութիւնից կուրացած՝ շարունակում է դարձեալ կենակցել նրա հետ... Ճանաչում է, բայց... (վաւաչտութեամբ բռնուած՝ զոհում է նրան դարձեալ իւր շնացութեանն ու լիարուութեանը:

Սյդ դեռ ոչինչ: Սիղա անելու սովորութիւնը շատ յաճախ ստեղծում է և այնպիսի դիպուկներ, երբ կենակցողները լինում են քոյր ու եղբայր, այսինքն միևնոյն մարդու իսկական կնոջ տըղան կենակցում է նրա ժամանակաւոր կնոջ դասեր հետ՝ իւր խորք քրոջ հետ...

Հայր և աղջիկ, քոյր և եղբայր — այդպիսի մեծացումները թէպէտև մահմետականութիւնը ինքն էլ ըստ երեւոյթին արդիւնում է, սակայն միեւնոյն ժամանակ չի զլանում անգիտութեան թեւերի տակ յղձանալ նրա հեշտացուցիչ ծառայութիւններով... Գիտակցութիւնն ու սովորութեանը զարգելի պատկերներ են ընծայում այդ երեւոյթին, իսկ մահմետականութիւնը աշխատում է սրբագործել նրան «Սիղա» անուան տակ...

ԵՆԻՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՒՆ



ՄԷԿԸ ԵՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերս

— Նշմարտութիւնը նման է արեգակին, ասում է Սպենսեր, որ իր ճառագայթներն արխար կերպով տարածում է ամենքի վրայ: Եւ շատ ճիշտ է այդ կարծիքը, բայց միայն վերացական կեանքում, միայն տեսականապէս, իսկ եթէ վերցնելու լինենք իրականութիւնը, եթէ վերլուծելու լինենք մարդկանց վարմունքը, այն ժամանակ կը գտնուէր որոշողին տարբեր եզրակացութեան, մարդիկ միշտ էլ շեղում են այդ ճառագայթների ուղիքից: շատ անգամ մթնութեան քողով են ծածկում, որպէս զի հասնեն այս կամ այն նպատակին, որպէս զի արդարացնեն իրանց այս կամ այն վարմունքը: Ապացոյցի համար բաւական է վերցնել երկու սեպերի փոխադարձ յարաբերութիւնը: Ի՞նչ է ներկայացնում նա: Կայ արդեօք ընդհանուր արդարութիւն: Ընդհանուր ճշմարտութիւն այդ երկուսի համար: — Ո՛չ: Կայ արդեօք զատարակութեան ու կենցաղի նմանութիւն, իրաւունքների ու պահանջների հաւասարութիւն — ըստ իրեն: Կայ վերջապէս բարոյական միանման վարմունք, միանման սովորութիւններ: — Գործեալ ոչ:

Մենք մի տեսակ արածեալ գիրք ենք ստեղծել ազամարդկանց համար և պատնէշներ բարձրացնել կանանց առաջ: Մենք քարոզում ենք, թէ մարդ արարածին անհրաժեշտ է անհասարակ-

ազատութիւն, անտեսական անկասկածութիւն, բարձր կրթութիւն և այլ բարիքներ, բայց երբ հարցը գալիս է կանանց մասին, բոլորովին հակասակ ընթացք ենք բռնում՝ այդպիսի վարմունքը գտնուած կեղծ ու պատիւ պատճառաբանութիւններով արդարացնելով:

Մենք յանուն ընտանեկան երջանկութեան՝ կանանցից պահանջում ենք անպայման ողջախոսութիւն, բարոյական անարատութիւն, բայց միեւնոյն ժամանակ ներողամտ աչքով ենք նայում, երբ տղամարդիկ միջնեւ ամուսնանալը հազար ու մէկ արկածներով են լցնում իրանց կեանքը և դեռ ամուսնութիւնից յետոյ էլ երբեմն շարունակում են այդպիսի ընթացքը:

Այդպիսի անարդարութիւն ու հակասական վարմունքը վաղուց արդէն մի սոցիալական շարիք է դարձել, որ կեանքի իւրաքանչիւր քայլափոխում արտայայտում է իր կորստաբեր հետեւանքները: Ահա այդ շարիքի գէշ է ուղղուած ֆեմինիզմը — կանանց շարժումը, զոր գէշ է բողոքում և գրքային բովանդակութիւնը:

Սովորական բողոք չէ դա, այլ մի բուն հեծեծանք, կանացի սիրող ու անգէն սրտից բղխած մի հեծեծանք: Պայտառ գոյներով պատկերացրած խանդավառ սիրտ, լեյկիֆ գծերով բնորոշած յուսախար կնոջ հոգեբանութիւն — ահ այն գործօնները, որոնք այնքան գրաւիչ, այնքան ազդու են դարձրել այդ հեծեծող ձայնը, որը մի ամբողջ հոսանք է ստեղծել գերմանական աշխարհում:

Վերջիվերջ անունն են տալիս այդ

նորաստեղծ հոսանքին, որ արձագանք է գտել ի՛նչ մասուլի էջերում և թէ հասարակութեան մէջ: Ետեք բողոքում են վերայի հեղինակութեան գէշ և նրան համարում են ջղային հիւանդ, նիցչէական հովերից սպառնալով: Բայց շատ շատերն էլ հիացած են նրա համարձակ մտքերով, կրակոտ ոճով, Եւ այդպիսով Պէէկը շատերի համար գրքայից կարգացում է մեծ հետաքրքրութեամբ իրօնեցնել է տալիս իր մասին: Միայն մի քանի ամուսնայ ընթացքում նա արդէն Նիդրլանդաւորականութեան է արժանացել և թարգմանուած է եւրոպական շատ լեզուներով:

Գաղափարի նորութիւն չը կայ նրա մէջ, Սակայն հեղինակուհին իր շնորհալի գրչով մօտենում է մարդկային հոգու այնպիսի լարերին, այնպէս պայծառ գոյներով և լուսաբանում իր հերոսուհու հոգեբանութիւնը, նրա հոգեկան յուզումները, որ այդ բողոքը ընկերացողին թւում է մի նորութիւն:

Գիրքը գրուած է յիշատակարանի ձևով, նրա սկզբում յիշատակարանի հեղինակուհին — օրիորդ Վերան գիմում է իր սրտի ընտրանքին այսպիսի խօսքերով:

Գէորգ

Ես չեմ կարող քրոջ լինել: Ես փորձեցի անցնել այդ անդունդը, որ բաժանում էր մեզ... բայց ի գործը: Ես անկարող եմ զսպել եմ զգացմունքները: Գո գրկում իմ կեանքը կը լինէր մի յաւիտենական կեղծիք... Ահա թէ ինչու ես հեռանում եմ քեզանից ընդմիշտ, յաւիտեան: Գէորգ:

Իմ սէրը դէպի քեզ աւելի զօրեղ է, քան թէ ապրելու ցանկութիւնը: Ես չեմ կարող քեզ տեսնել տանջուելիս: Ես մեր հասարակական կազմակերպութեան զոհն եմ... ոչ առաջին և ոչ էլ վերջին զոհը: Ես չափազանց թոյլ եմ այդ հակայական կոիւր մղելու համար և չափօգտնող միայնակ: Բայց կատարել իմ խնդիրը, Գէորգ, իմ ամենավերջին խնդիրը: Կուր՛ք յանուն այդ գաղափարի, որու համար ես գոհուում եմ: Կուր՛ք այդ գաղափարի համար, և դա կը լինի քո կողմից մի լաւ յիշողութիւն իմ մասին:

Գէորգ, ուղարկում եմ քեզ յիշատակարանիս վերջին երեսները, ձերս միջի իր քաջանշիւր խօսքը իմ հոգու մի մասնիկն է: Կարող ես այդ յիշատակարանը հրատարակել մի որ և է կեղծ անուանով:

Եւ եթէ գոնէ մի քանի մտորակ այդ իմ սրբութիւն սրբոցին սօտենալիս՝ ծաղկով ու արհամարհանքով չը վերաբերուեն զէպի ինձ, այն ժամանակ ես գոհ կը լինեմ...

Մնաս բարով, Գէորգ:

Աշխատիր մխիթալել իմ խեղճ ծնողներին:

Ուղարկում եմ քեզ իմ վերջին բարեւը, որ իմ սիրոյ և տանջանքների արդիւնքն է կալուած:

Միշտ քեզ հաւատարիմ Վերա (Շարունակելի)

ՎՄուրճ:

Սիգան ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մի թանձրամած մշուշ, որի մէջ պարսիկը, յագուրտ է ալիս իւր անանական կրքերի կեղտալից պահանջներին և որին ցրուել ու վանել կարող է միմիայն իսկական գիտութեան անպատիր լոյսը...

21 փետր. 1904  
Թէհրան

Աղուան

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Սօֆիայի թաղական խորհուրդս պարտ անձին կը համարի իւր խորին շնորհակալութիւնն յայտնել, քաղաքիս նորակազմ թատերասէր, ինչպէս նաեւ «Վարիէթէ» թատերական խմբերուն՝ որք բարեյաճեցան անձնուիրաբար ներկայացնել «Վասպուրականի Հերոսներն» ի նպաստ ազգային երկսեռ նախակրթարանին:

Ի դիմաց թաղ. խորհրդոյ Աստեղադիր Աստեղագետ Ք. Մ. Բարսեղեան Բ. Ասիկեան Սօֆիա, 29 փետր. 1904

Ա Ղ Ք Ա Տ Ա Խ Ն Ա Մ Ը

Յարգելի խմբագրութիւն «Շարժում» լրագրոյ:

Կը խնդրենք հաճեցէք հետեւեալ ազգը ձեր չորեքշաբթուան թիւին մէջ հրատարակելու շնորհը ընել, որու համար կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Պատիւ ունինք ընկերութեանս մեծարոյ բաժանորդաց ծանուցանել, թէ Պ. Համբարձում Գիրիչեան ընկերութեան հաւաքչութեան պաշտօնը ստանձնած լինելով, յետ այսու կանոնադրապէս բաժնեգնով գանձումը պիտի կատարէ. հետեւաբար կը խնդրուի, որ պատ. անդամները փոխան ընկալազրի վճարեն յիշեալին իրենց բաժանորդագրիւնները:

Ի դիմաց Աղք. Բնկ. Գոյձ. Ժողով 9 Մարտ 1904 (Կնիք) Վառնա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիտինէն 25 հոգի կամաւոր մեկնած են դէպի Քարպին ուսական բանակին մէջ մտնելու համար: Մեկնողները Վիտինի քաղաքագիտէն ստացած են գրամական կարեւոր նպատակներ: Բերիչ 100 հոգի պուլկարներ ալ ներկայացած են Բեթերսպուկ և առաջարկած են բանակին մէջ ծառայութեան մտնել:

Դրան և նաչօրիչի միջեւ նիզակակցութիւնները կը շարունակուին պարբերական դադարներով: Պուլկար կառավարութիւնը երկու նպատակ ունի, առա-

ջին կուզէ մակեղոնացի պայթականներու վերագարձը պահանջել, որովհետեւ ժամանակի ընթացքին Պուլկարիա չպիտի կարողանայ ապրեցնել այդքան փախուտականներ: Պուլկարիա կուզէ երկրորդ քարենորոգումները տարածել նաեւ Ատրիանուպոլսոյ նահանգին վրայ:

Երկրագործական գանձարանը փոխուած է երկրագործական պանքի մը, որ ունի բաւական մեծ գրամագումար և կը խոստանայ երկրագործ ժողովրդին օգտակար հանգիստանալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Մովակալ Գաբարով փորձեց Բորթ-Արթուրի ծոցէն դուրս ելլել և իր նաւերը միացնել Վլատիվոստօքի տորմիդին հետ: Փորձը անյաջող անցաւ, որովհետեւ ճարձական նաւատորմիչը ամէն կարևոր կէտերը գրաւած է և Բորթ-Արթուրի վրայ գրած է խիստ հսկողութիւն, ճարձական զօրավար Ուրին իր նաւախումբով կը գտնուի նախաձեռնի և Բորթայի միջեւ ու գոցած է ամէն անցք: Թօօզ գլխաւոր ոյժով կը գտնուի Բորթայի նեղուցին մէջ, ծովակալ Կամիլովա ճարձական ծովին մէջ մանաւոր հսկողութեան տակ առած է ուսները:

Չինական սպառազինումները և զօրքի տեղափոխութիւնը Ռուսիոյ և Չինաստանի միջև լուրջ վէճերու պատճառ պիտի դառնալ ըստ երեւոյթի: Ռուսական դեսպանը Բէթերսպուկ կառավարութեան պահանջած է ետ քաշել շինական պարխայներէն դէպի վեր շրկուած զօրքերը, յայտարարելով, որ հակառակ պալագային Ռուսիա ստիպուած է ընդունիլ, թէ Չինաստան կը յարի ճարձակոյ կողմը, Բեթերսպուկի մէջ կը կարծուի թէ ճարձակոյ ու Չինաստանի մէջ կնքուած է գաղտնի դաշնագրութիւն մը: Չինական սահմանին վրայ կեդրոնացուցած են 80,000 զօրք, այնպէս որ Ռուսիա ստիպուած է այդ սահմաններուն վրայ միշտ զօրք պահել:

Ռուսերը սկսած են Եալուի հիւսիսային կողմը քաշուիլ: Բիւօկանկի և Եալուի միջև միացած են միայն 200 կողակներ:

Բեթերսպուկի մէջ լուր տարածուած է, թէ Ռուսական սպայագունդի անդամներէն ի վրով ճարձակացիներուն յայտնուի զինուորական գաղտնիքներ և ըրեր է մասնու թիւներ: Պաշտօնական լուր կայ, թէ իւրով բանակէն արտաքսուած է:

Մարքիզ Իթօ Քորէայի մէջ գտած է շուրջ ունեւելութիւն ու գրաւած կայսեր համակրութիւնը: Տէյլի Մէլ և կը հաղորդէ, որ ճարձակացիներու ձեռք գերի ինկած զինուոր մը շատ վատ նկարագրէ Բորթ-Արթուրի գրութիւնը: Վնասուած նաւերը գեռ չեն նորոգուած, պաշարը շատ առատ չէ:

Ռուսական հաղորդակցութեան նախարարութիւնը որոշել է զբաւառուած շոգեկառքեր պատրաստել տալ Մանչուրիոյ համար:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Ուլթանը վախնալով, որ պետութիւնները խիստ քայլեր կառնեն արամագրութիւն ցոյց կուտայ դեսպաններու Մակեդոնիոյ ոստիկանական կազմին համար գրած պահանջներուն առջեւ տեղի տալ:

Լուր կը պատի, թէ կ. Պոլսոյ Ռուսական դեսպան Զինովիէզ կուզէ պաշտօնէն ետ քաշուիլ:

Ճարքոյի Լիւմբինը ապստամբ Ալպանացիներուն հետ միանալու տրամագրութիւն ցոյց կուտան:

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն

Ե. Պոլսէն «Յայթին» կը հեռագրեն. «Պիթիսի վիլայէթի վրձակը երկիւղալի է: Նոր կուսակալ Թէրիտ պէյ գրութիւնը աւելի կը ծանրացնէ. Հայ խումբերու շէֆ Անդրանիկի ներկայութիւնը Սասունի մէջ քրդական յարձակումներու տեղի պիտի տայ, Դրան ցանկութեան համեմատ Պատրիարքը եպիսկոպոսներուն ուղղուած շրջաբերականներ կը պատրաստէ, որոնց մէջ ժողովուրդը կը յորդորուի Սուլթանին հաւատարիմ մնալ և գրտէն եկող խռովարարներուն շանսալ:

«Ինֆորկացիօն» կը հաղորդէ, որ Թիւրք կառավարութիւնը ոչ միայն Սասունի և Մուշի շրջակայքը, որք գրաւուած են հայ յեղափոխականներով, պատրաստութիւններ կը տեսնէ, այլև Էրզրումի և Վանի վիլայէթներուն մէջ, այսինքն Ռուսիոյ և Պարսկաստանի հահմաններուն վրայ: Սահմանի պահպանութիւնը կրկնապատկուած է, համիտիէ զօրքերը ողողած են ամէն կողմ ֆէտայիներ փնտռելու և զանոնք պատժելու համար, բայց որովհետեւ ֆէտայիներ չեն կրնար գտնել, կը բռնանան շայխաղաղ ազգաբնակչութեան վրայ և զայն ձգած են սարսափի մէջ. Կանոնաւոր զօրքերը կաւելցուին, որ ասոնք քիւրա համիտներուն օգնեն իրենց առաջակութեանց մէջ, Հայ գիւղերը լեցուած են թիւրք

զօրքերով, որոնց սանձարձակութիւնը չափ ու սահման չունի:

Կողպուտ, անարգանք և ծեծ սովորական բաներ դարձուցած են թիւրք զինուորները խեղճ հայ զիւղացիներու հաշով ապրիլ կարենալու համար: Ճանապարհներու հաղորդակցութիւնը դադարով առեւտուրը կանգ առած է:

Վերջերս Էրզրումի և Պայալիտի միջև շատ հայ վաճառականներու ապրանքները կողպուտած են: Իւլ-Բիլիէի վանքը գրաւուած է զօրքերէ: Վասպուրականի նահանգի ազգաբնակչութիւնը կապի մշտական սարսափի մէջ, հոն կը վախցուի նոր կոտորած մը: Երբ զի մէջ երեւի գեռ շատ կանուխ կը համարուի այդպէս հրաման մը տալու համար:

ՅՐԱՆՍԱ

Մարտիտի նաւահանգիստի աշխատանքները գործադուր ըրած են:

Պապը ճառի մը մէջ բողոքած է ֆրանսական կառավարութեան կաթոլիկ եկեղեցիին հանդէպ բռնած ընթացքին դէմ:

ՊԵՆՏԻՊԱ

Լիւթթիս քաղաքի ոստիկանագետին տունը գրան առիւն անիշխանական մը ուսմը մը ձեռքեր է, որը պայթելով վիրաւորած է 7 հոգի և ոստիկանագետին տունը օդը հանած է:

ԳԻՐՄԱՆԻԱ

Գերմ. հարաւային Ափրիկէի ապստամբութեանը կը շարունակուի: Վերջերս պատահած կռուի մը մէջ գերմանացիք ետ քաշուած են կորսնցնելով 7 սպայ, 19 զինուոր. 2 սպայ և 3 զինուոր ալ վիրաւորուած են:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ

Մեր բաժանորդներուն կը յիշեցնենք, որ ներկայ փետրվար 1-ին րոացաւ Վարժումի բաժանորդագրական տարեշրջանը և կը խնդրենք անուցմէ, որ փութացնեն բաժնեզիններու վճարումը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ մեր բաժանորդները պէտքէ զրամները ուղղակի մեզ ուղարկեն:

Դիւրութեան համար անոնք կարող են Վառնայի Աղք. պանքայէն գանձել 15 ֆր. (3 տոլ.) շէքու ուղարկել ՊԱՐՍՅԱՍՍԱՆԻ բաժանորդները գիւրութեան համար կարող են ուսական թղթով ամ գրկել ապահովագրուած նամակներու մէջ: Ռուսական փողի հաշով 6 րուպլէ է Վարժումի տարեկան բաժնեգինը:

Ստիպուած ենք նորէն կրկնել, որ «Շարժում» բաժանորդագրութիւնը կանխիկ է եւ իր հասցէին հետ բաժնեգին ալ չը զրկողներու դիմումները անհետեւանք կը մնան:

Отговорникъ  
Мурадъ-Ераносянъ  
Печатница «Вѣрность» Варна